ռանալ գործերից։ Ասում են միայն, որ իշխան Բիսմարկ, մեծալով գերմանական միջազգային քաղաքականութեան ղեկավարող, մի ուրիշին կը յանձնէ ներքին հարցերի լուծումն։ Իշխան Բիսմարկի յաջորդը, ինչպէս լուր է տարածված, լինելու է Էլզաս-Լոթարինգիայի ժամեան փոխարքայ Ֆէլդմարշալ Մանտէյֆել, որ մի ժամանակ մըրցում էր Բիսմարկի հետ, բայց վերջինին աջողվեցաւ հեռացնել նրան Բերլինի պալատից։ Բարոն Մանտէյֆել խիստ պահպանողական և մինչև անգամ յեսուիտիական է համարվում, բայց կառավարելով Ֆրանսիայից խլած նահանգները, նա ապացուցեց, որ պահպանողական լինելով, նա աւելի ազատամիտ է, քան թէ այդպէս անուանված կուսակցութիւնը։ Բարոն Մանտէյֆել հակառակ էր "կուլտուրական կռիւին", որ սկսեցին ազատամիտները կաթոլիկ եկեղեցու դէմ և որ ներկայումս ներքին դժուարութիւններ է պատճառում։ Այժմ գերմանական բոլոր ճշմարիտ ազատամիտները բաժանում են Մանտէյֆելի կարծիքը, քանի որ ստիպողական միջոցները կրօնական գործերի վերաբերութեամբ առնչող հետևանքներ ունեցան։ Գերմանական ժողովուրդը, ընտրելով բաւական թուով կաթոլիկ կուսակցութեան անդամներին, պարզ բողոքեց կառավարութեան միակողմանի քաղաքականութեան դէմ կրօնական հարցերի վերաբերութեամբ, իսկ ազգային ազատամիտների անկումը նրանց գործունէութեան հետևանքն է, որովհետև ներքանք իսկապէս ամենի բերին ազատամտութեան դրօշակին Գերմանիայի մէջ։ Այնուամենայնիւ գերմանական կեղծ ազատամիտները անուղղելի են. նրանք ոչինչ չը սովորեցին և ոչինչ չը մոռացան։ Նրանք բողոքում են կառավարութեան և կենտրոնական կուսակցութեան համաձայնութեան դէմ թէպէտ իրանք խօսում են պարլամենտական սկզբունքների դէմ։ Ներքանք աշխատում են անուշադիր թողնել այն իրողութիւնը, որ կենտրոնը գերմանական պարլամենտի մէջ ամենաբազմաթիւ և միաձայն կուսակցութիւն է կազմում։

ՆԱՄԱԿ ԹԻԻԲՌԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 5 Նոյեմբերի

Փարիզու «Missions catholiques» անուն լրագրի մէջ հետևեալ տողերը կը կարդանք։

«Ցիսուսեան վերապատուելի հայրերը արդէն Ամասիոյ և Մարզուանի մէջ դպրոցներ հաստատեր են։ Քանի մը օր առաջ երեք կրօնաւորներ մեկնեցան՝ Թոխատի մէջ (Եւդոկիա) ուսումնարան մը հիմնելու համար, նոյն ժամանակ երկու կրօնաւոր ալ Ատանայի մէջ (Կիլիկիա) մի դպրոց հաստատեր են։ Արդէն Բրուսոն և դպրոցաց եղբայրները նոյն պաշտօնով Տրապիզոն հասեր են։ Կիմանանք որ դոմինիկեան հայրերը որ Մոսուլի մէջ քարոզչութեամբ կը զբաղին դիտաւորութիւն ունին վանայ, Բաղէշի և Մուշի մէջ դպրոցներ հաստատելու։ Անոնցմէ մին արդէն վանի ժամանած է։ Քաղաքին ընդհանուր կուսակալը շատ քաղաքավարութեամբ ընդուներ է զայն թէպէտ, բայց դեռ դպրոցը բանալու թոյլտուութիւն չէ արած։ Կերևի թէ այդ պաշտօնատարը այնքան անկարող է որ մինչև անգամ իր կառավարութեան ճշմարիտ շահերը չը հասկընար։ Արդարև կաթոլիկ դպրոց մը յոյժ նպաստաւոր ըլլալով կրօնափոխութեան հոսանքին, թէ Բրան և թէ կաթոլիկ եկեղեցւոյ շահերուն այդ դպրոցները օգտակար են ամենն մասամբ։»

Ահաւասիկ կարգ մը մարդիկ, որ հազիւ երկու տարի կայ Ֆրանսան արտաքսեց իր ծոցէն, իբր մանկութեան վնասակար, գաղափարաց ապականիչ և խիղճերը բռնաբարող։ Արքա այժմ մի ապաստանարան կրօնների աշխարհիս մէկ անկիւնը և Բոքր-Ասիան կընտրեն իրենց գործունէութեան ասպարէզ։ Խորհուրդը լաւ է և զայն յղացող վերապատուելիներուն սրամտութեանը արժանի։ Ո՞րտեղ պիտի գտնան աւելի փոփոխամիտ և դիւրահաւան մի ժողովուրդ։ Այս օրէն ուրեմն կրնանք վստահ ըլլալ որ լատինականութիւնը արագութեամբ պիտի տարածուի Փոքր Ասիոյ հայոց մէջ, և այսքան այլակրօն հայ ժողովրդեան մէջ պիտի հաստատի նաև լատին հայը։

Հայոց մէջ կրօնքի այս զանազանութիւնները պէտք էր անտարբեր թողուլ մեզ և պէտք էր հրճուիլ անոգամ որ ուսումը և կրթութիւնը օտարազգիներուն ձեռքով ալ մեծ զարկ մը պիտի ընդունին մեր գաւառական ազգայնոց մէջ։ Բայց ներկայ պարագայի մէջ այլ է խնդիրը։ Մենք միշտ համոզուած կը մնանք թէ կրօնը չէ եղած երբէք մեր ազգայնութիւնը մինչև ցայժըմ պահողը և թէ հայն միշտ հայ է ինչ կրօնի որ պատկանի. նոյն իսկ մահմեդական եթէ ըլլայ, բաւական է որ ազգայնութեան հոգին չը մարի հայու մը սրտին մէջ։ Սակայն երբ կրօնափոխութեամբ հայը կիյնի կաթոլիկութեան, կամ աւելի ճիշդ խօսելով լատինականութեան գիրկը, մտահոգութիւններս սաստիկ պէտք է ըլլայ, վասն զի լատինական կրօնի հոգին մեր ազգին համար ազգայնութեան հոգւոյն հետ չէ կարող կենակցել։ Այս բան՝ շատ անգամներ բացէ ի բաց խոստովանած են կաթոլիկ եկեղեցւոյ Ակեռլքի մէջ ներկայացուցիչները։ Նոյն իսկ Հասունեան կարդինալը և Նորընտիր Ազարեանը, որք համարձակ յայտարարած են թէ իրենք ընաւ ազգութիւն չեն ճանաչեր, այլ միմիայն տիրող կառավարութեան հլու հնազանդութիւն և Հռոմի անսխալ պատգամներուն կատարումը գիտեն։ Ազգային լեզու, ազգային կազմակերպութեան ձգտումներ, շնորհուած արտօնութիւններու պահպանումը, ասոնք բոլոր ոչ միայն վնասակար կը նկատեն իրենց քարոզած կրօնին տարածմանը՝ այլ և անօգուտ և աւելորդ իսկ կը համարեն հանդերձեալ աշխարհին մէջ փրկութիւն գտնելու համար։

Այս կերպ կրօնափոխութեան հետևութիւններն որքան մեր ամբողջութեան վնասաբեր լինելը յայտնի է։ Առանց այս կամ այն դաւանութեան բացարձակ կողմնակից ըլլալու, երբ կը տեսնենք որ հայ մը՝ ընդունելով մի ծիսական փոփոխութիւն, կը հրաժարի նաև իր ազգութենէն, կը դադարի ինքզինքը հայ նկատելէ, կուրանայ զայն անգամ, մեծ կը զգանք այդպիսի կրօնքի մը մեր մէջ տարածումը տեսնելով։

Հազարաւոր ընտանիքներ կան այսօր միայն Թիւրքիայի մէջ, մանաւանդ Կ. Պոլսոյ և Զմիւռնիայի, Անկիւրայի, Հալէպի և Պայպուրթի մէջ, որք ոչ միայն լատինականութիւնը ընդունելով մոռացեր են իրենց մայրենի լեզուն, այլ և իրենց տոհմական և մկրտութեան անունը ֆրանկացուցեր են։ Բացի այդ՝ անոնց քուն հայոց դէմ ունեցած ատելութիւնը և թշնամութիւնը ծանօթ է ամենուն—գինիէ դարձած քացախը աւելի կծու կըլլայ։—Հայը անոնց համար ծագու առարկայ մըն է, և գիտենք անոնց մէջ այնպիսիներ որ աւելի դիւրաւ կը խոստովանին անարգ արհեստով մը ապրելնին, քան թէ սեբունդով հայ ըլլալնին։

Ցիսուսեան վերապատուելիներուն Հայաստանի ամեն կողմ տարածումը, թէպէտ և դպրոցներ բանալու համար, մեզ նկատմամբ շատ ուրախալի բան մը չէ ուրեմն։ Բնական է որ անոնց դպրոցները պիտի յաճախեն հայ մանկտիք, եթէ չը գտնեն նոյնչափ զարգացեալ ազգային դպրոց մը այն քաղաքներուն և գիւղերուն մէջ։ Դժբաղդաբար հայաբնակ կենտրոններէն շատերը զուրկ են այդպիսի դպրոցներէ և հայ ծնողք, որ ինչ պայմանով որ ըլլայ կուզեն կրթութիւն տալ իրենց զաւակաց, առանց և այդ կրթութեան հեռաւոր և ազգավնաս հետևանքը նախագուշակելու, պիտի փութան յուզարկել զայն յիսուսեաններու մօտ, որք, ինչպէս յայտնի է, խիստ վարժ են նոցա փափուկ ուղեղները ուզած ձևովնին ձուլելու։

Ինչ փոյթ մեզի երբ հայը այս կամ այն կրօնքը կը դաւանի, եթէ կը պահէ միանգամայն հայութեան բոլոր միւս հանգամանքները։ Եթէ նախկին Մխիթարեանք ըլլային Հայաստանի մէջ դպրոցները բացող, ծ. այն ատեն մեր պարարքն էր ամեն այժմեան խրախուսել անոնց այդ ձեռնարկութիւնները, խրատել անգամ ծնողք որ օգուտ քաղեն անոնցմէ, վասն զի անոնց ձեռքով հայ երիտասարդութիւնը կը ստանար ուսման հետ նաև ազգային դաստիարակութիւն։ Մինչդեռ այժմ՝ լատինականութեան յարելով, հայ գաւառացին՝ կարելի է որ ուղիղ գիծով երկնից արքայութեանը արժանանայ, բայց անպատճառ պիտի դադարի հայ լինելէ։

Մեզ համար կանխիկը աւելի հարկաւոր է քան թէ ապառիկը։

Ցիսուսեաններուն այս կերպ մարախի նման հայ գաւառներու մէջ տարածումը, և անոնց բուն նպատակը յայտնելը պէտք է բաւական ըլլայ, որ ամեն կողմ մերիններս հակեն անոնց արարքներուն վրա, խոյընդոտ ըլլան անոնց այն տեղերը հաստատուելուն և յառաջանալուն, և այս՝ ինչպէս կը կարծեն շատերը, հալածելով կարելի չէ ձեռք բերել, այլ անոնց ըրածէն լաւագոյնը ընելով։

Այս պարտաւորութիւնը որքա՜ն աւելի վայել է, եթէ ոչ էջմիածնի։

Ե. Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագրները հաղորդում են որ գերմանական կայսր Վիլհելմ այս օրերս փոքր ինչ մըրսեց, բայց այնու ամենայնիւ կարողացաւ ընդունել թագաժառանգին։

—Բիսմարկ մի մասնաւոր խօսակցութեան ժամանակ յայտնեց որ կաշխատի կազմել միներտորութիւն կամ կենտրոնի, կամ ազատամիտ կուսակցութեան անդամներից։

—Գերմանական սոցիալիստների պարագլուխներ Բեբել և Լիբկնեխտ հրատարակեցին մի յօդուած, որի մէջ յայտնում են թէ պահպանողական, կայսերական կուսակցութիւնը առաջարկում էր նրանց որ կօգնի սոցիալիստների կանդիդատների ընտրութեանը, այն պայմանով որ սոցիալիստներն էլ քուէարկեն պահպանողական կուսակցութեան պրօէկտների համար բարեխառնգում։ Այնուհետև յետադէմները խոստանում էին վերցնել տալ սոցիալիստների դէմ օրէնքները։ Բայց սոցիալիստները չը համաձայնվեցան այդ պայմանների հետ։

—«Neue Freie Presse» լրագրին Կ. Պոլսից հաղորդում են, որ վերջին ժամանակներում սուլթանի պալատում շատ անգամ խորհրդակցութիւններ են կատարվում, որոնց մէջ բացի միներտոր-նախագահ Սայիդ-փաշայից, մասնակցում էր և ներքին գործերի միներտոր Մահմուդ-Նէդիմ-փաշա։ Խորհրդակցութեան առարկան գաղտնի է պահվում, այնու ամենայնիւ ամենքը համոզված են, որ նա սերտ կապ ունի Գէջաոի մէջ պատահած ապստամբութեան հետ։ Կ. Պոլսում տեղեկութիւններ են ստացված, որ ապարանների ապստամբութիւնը մեծ չափեր է ստանում և որ ապարանները դիտաւորութիւն ունեն իրանց անկախութիւնը հրատարակել փոքրիշատիցս։ Թիւրքաց կառավարութիւնը այդ պատճառով դիտաւորութիւն ունի վճռողական հարուած տալ ապրանքներին։ Այդ նպատակին հասնելու համար սուլթանը Գէջաոի զլխաւոր-նահանգապետ Նազիմ Հաջի-Իզզէտ-փաշային։

—«Bohemia» լրագրում Կ. Պոլսից մէկ նամակ է տպված, որի մասին լրագիրը յայտնում է, թէ նամակի մէջ հաղորդված տեղեկութիւնները հաստատ աղբիւրներից են ստացված։ Այդ նամակի մէջ ասված է, որ թիւրքաց կառավարութիւնը արդէն չորս ամիս առաջ իմացաւ իր ագենտների ձեռքով, որ աւստրիական կառավարութիւնը դիտաւորութիւն ունի զինուորագրութիւն մտցնել Բոսնիա և Հերցեգովինա նահանգներում։ Վերոյիշեալ գործակատարները հաղորդեցին, որ Սարաէվում առանձին յանձնաժողով է նշանակված զինուորագրութեան սիստեմը քննելու համար։ Թիւրքաց կառավարութիւնը անյապաղ հրամայեց Վիլենայի իր ներկայացուցչին բողոքել զինուորագրութիւն մտցնելու դէմ։ Թիւրքաց ներկայացուցիչներին առած շրջաբերականը հետևեալ խօսքերով է վերջանում։ «Մենք բողոքում են այդպիսի գործողութեան դէմ, որովհետև դրանով խախտվում են սուլթանի բարձրագոյն իրաւունքները և դա հակառակում է 1879 թուի ապրիլի 21-ին Աւստրօ-Ունգարիայի և Բ. Դրան մէջ կնքված դաշնագրին»։ Վերջը նամակի մէջ ասված է, որ աւստրիական կառավարութիւնը մասնաւոր ճանապարհով դիմեց Թիւրքաց գեներալներից մէկին, որը յայտնի է իր կառավարական ընդունակութիւններով, հարցնելով, արդեօք չի համաձայնվի նա յայտնի պայմաններով բռնակալ հերցեգովինական մէկ նոր զօրք կազմակերպել։ Գեներալի հետ բանակցութիւնները ոչ մի հետևանք չունեցան։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բերլինում Հրեղէն Երկրից բերված վայրենիների մէկ ընտանիք է պահվում։ Ընտանիքը բաղկացած է ութ հասակաւոր անձերից և երկու մանուկներից, որոնք զարմացնում են ամենքին իրանց շատակերութեամբ։ Դրանք իւրաքանչիւր օր ուտում են երեսուն ֆունտի չափ միս, մեծ քանակութեամբ հացի հետ։ Այդ վայրենիների ամենասիրելի կերակուրը ծովային խխունջներն են։ Պտուղներ և ընդեղէններ բոլորովին չեն ուտում։ Բազմաթիւ հասարակութիւն գնում է տեսնելու Հրեղէն Երկրի այդ վայրենիներին և ընծայում է նրանց զանազան քաղցրեղէններ, որոնց բոլորովին ձեռք չեն տալիս նրանք։

* * *

Արտասահմանեան լրագիրները հաղորդում են, որ հռչակաւոր երգչուհի Պատտի սաստիկ նախապաշարմունքներ ունի։ Դեռ ևս մանուկ հասակում նրան գուշակեցին, որ ծովը կը լինի նրա գերեզմանը։ Նա հաւատում էր այդ բանին, և ամենևին չէր վստահանում Նոր-Աշխարհի հրաւէրը ընդունել այնտեղի բեմի վրա երգելու համար։ Վերջին ժամանակում նա փոխեց իր վճիռը, բայց միայն այն պատճառով որ նրան մի և նոյն ժամանակ գուշակեցին, թէ նա երրորդ անգամ կը լինի մարդու գնացած, իսկ նրա այժմեան երկրորդ ամուսինը, Նիկոլինին, կենդանի է և ուղեկցում է նրան։ Այնուամենայնիւ Ամերիկա գնալուց առաջ, Պատտին կատակ թողեց և կարգադրեց, որ եթէ մեռնի, իր մարմինը Անգլիա տեղափոխեն և թաղեն իր այնտեղի կալուածքի մէջ։ Ամերիկացիները անհամբերութեամբ սպասում են նրան և արդէն ներկայացումների տեղերը առաջուց առապելական գներով են ծախվում։ Ամերիկացիների ոգևորութիւնը մինչև այնտեղ հասաւ, որ բեսալների մէկ գործարանատէր Նիւ-Եօրկում առաջարկեց վաթսուն հազար ֆրանկ միայն նրա համար, որ Պատտիի կօնցէրտների համար երաժշտական գործիքները իրանից վերցնեն։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 Նոյեմբերի։ „Порядокъ" լրագիրը հաղորդում է. վերաքննվում է ծառայողներին ճանապարհածախս տալու հարցը։ Հաշիւը ձիաների թուի համեմատ կը փոխարինվի ճանապարհական հաղորդակցութիւնների կանոնների համեմատ։ Նոյեմբերի 12-ին էկսպերտները որոշեցին. Հրէաներից գինու գործարանների պահելու հարցի քննութիւնը յետաձգված է մինչև յունվար։ Մշակված կանոնները խմիչքների մասին այժ չեն ունենայ մայրաքաղաքների, Օդեսայի, Լեհաստանի, Օստզէյեան երկրի, Տուրկեստանի և Անդրկովկասի մէջ։ Այդ տեղերի համար առանձին խորհրդակցութիւններ կը լինեն տեղական ներկայացուցիչներով։

Կ. ՊՕԼԻՍ, 13 Նոյեմբերի։ Ուրբաթ էրզրումի շրջականերում հիւանդութիւն յայտնվեցաւ ժանտախտի նշաններով։ Բոլոր միջոցները գործադրված են։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 Նոյեմբերի։ Երէկ ժամի 3-ին պետական պոլիցիայի բաժնի նիստի ժամանակ, մի երիտասարդ ըստ ելևէջին հրէայ, կանչելով գեներալ Զերեմֆինի բացատրութիւնների համար, նրա վրա բէվոլվեր արձակեց։ Գնդակը ծակեց վերևի հագուստը առանց վնաս պատճառելու։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 Նոյեմբերի։ „Правит. Вѣстн." լրագիրը հաղորդում է. գեներալ Զերեմֆինի վրա բէվոլվեր արձակողը յայտնվեցաւ Դրօգոնեսկայա նահանգի ազնուական Նիկոլայ Սանկօվսկի, որ հասել է Ս. Պետերբուրգ նորերում Մօրշանսկից։ Նա յայտնեց, որ իր հետ եկել է Մեյնիկով։ Մեյնիկով կալանաւորված է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 Նոյեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր., երկրորդ 91 ր., երրորդ 92 ր., չորրորդ 90 ր. 75 կ., հինգերորդ 90 ր. 50½ կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 220 ր., 50 կ., երկրորդ 214 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ր. 87 կ., երկրորդ 89 ր. 87 կ., երրորդ 90 ր., ոսկի 7 ր. 70 կ.։ Ուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ 25,69 պէնս, Ամստերդամի վրա 130,12 պէնս, ուսաց 100 բուբլ Համբուրգի վրա 219 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 270 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ